ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ԲԸԱՇՁԲ-10/7-1

ք. Երևան 16-ը հունիսի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արփիսոլար» ՍՊԸ-ն (անվանափոխությունից առաջ՝ «Սի Էյջ Էս վերիսել սերվիս» ՍՊԸ), ի դեմս ընկերության տնօրեն Ա. Զոբանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կապալառու, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի № 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շինարարական աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում սույն պայմանագրին կից կնքվող համաձայնագրով: Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով՝ համաձայն հաստատված թերությունների ակտերի:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող

շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներ կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված № 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված № 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները ծավալաթերթ-նախահաշվին չհամապատասխանելու դեպքում

կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի № 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի № 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի № 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր (առավելագույն) գինը կազմում է 25,000,000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի № 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար № 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են ՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ԿԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Կապալառուի կողմից «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲԸԱՇՁԲ-10/7» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնային առաջարկով աշխատանքների համար սահմանված միավորի գների հանրագումարի գինն է, որը կազմում է 1,832,880 ՀՀ դրամ.

ՆԳ-ն Պատվիրատուի կողմից ընթացակարգի հրավերով ներկայացված ծավալաթերթով նախատեսված աշխատանքների համար սահմանված միավորի նախահաշվային գների հանրագումար նշված գինն է, որը կազմում է 2,698,290 ՀՀ դրամ.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.8 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի №№ 1, 2, 3, 4 և 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.12 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿԾ և ԶԲ վարչությունը:**

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԱՐՓԻՍՈԼԱՐ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	(մինչև անվանափոխությունը՝
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն	«Սիէյջէս Վերիսել Սերվիս» ՍՊԸ)
Հ/հ 900011117034	ք. Երևան Դավթաշեն 3 թ. 12/3
ՀՎՀՀ 02703824	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ պաշտպանության նախարարության	Հ/Հ 1930047941140100
ՆՏԱ դեպարտամենտի ՊԺԿ	ՀՎՀՀ 01825631
	տնօրեն
Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ՉՈԲԱՆՅԱՆ

Հավելված № 1
ԲՇԱՇՁԲ-10/7-1 պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ. թ/հ	CPV Անվանումը	Աշխատանքի (ծառայության) անվանումը	Չ/մ	Միավորի Պլանավորված գինը հազ.դրամ
1	**Արևային էներգիայի ստացման համակարգերի տեղադրում CPV՝ 09331400/**	**Արևային ջրատաքացուցիչների տեղադրում**		
		Արևային հորիզոնական, անջատ, վակուումային ջրատաքացուցիչ սաքավորման տեղադրում /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	52.61
		Արևային հորիզոնական, անջատ, վակուումային ջրատաքացուցիչ սաքավորում, իր հենակալման սարքվածքներով (զանգվածը դատարկ 150կգ, հզոր. 4,0կվտ, տարողությունը 140լ) /արժեքը/	լրակազմ	560.00
		Հսկիչ ղեկավարման վահանակի տեղադրում կամ փոխարինում TK-SC6 /առանց արժեքի/	լրակազմ	7.55
		Հսկիչ ղեկավարման վահանակ TK-SC6 /արժեքը/	հատ	30.00
		Արևային թերմոսիֆոն, պարզ, վակուումային ջրատաքացուցիչ սաքավորման տեղադրում /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	36.35
		Արևային թերմոսիֆոն, պարզ, վակուումային ջրատաքացուցիչ սաքավորում, իր հենակալման սարքվածքներով /արժեքը/	լրակազմ	400.00
		Հսկիչ ղեկավարման վահանակի տեղադրում կամ փոխարինում TK-7 /առանց արժեքի/	լրակազմ	7.55
		Հսկիչ ղեկավարման վահանակ TK-7 /արժեքը/	հատ	15.00
		Արևային ջրատաքացուցիչի խողովակ-անոթի փոխարինում /երկար. 1,8մ, տրամագիծը 58մմ չափի/	հատ	7.55
		Կուտակային 2 ջերմափոխանակիչով, 150լ բաքի տեղադրում /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	22.43
		Կուտակային 2 ջերմափոխանակիչով, 150լ բաք, տեն 2կվտ հզոր., իր հենակալման սարքվածքներով /արժեքը/	լրակազմ	220.00
		2կվտ հզոր. տենի փոխարինում	լրակազմ	11.78
		Ընդարձակման թերմոխառնիչ բաքի տեղադրում, 30լ /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	7.82
		Ընդարձակման թերմոխառնիչ բաք, 30լ, իր հենակալման սարքվածքներով /արժեքը/	լրակազմ	32.00
		Շրջանառու պոմպի տեղադրում /առանց պոմպի արժեքի/	լրակազմ	12.76
		Շրջանառու պոմպի նորոգում	լրակազմ	17.86
		Շրջանառու պոմպ, 25/6 H=6մ 60լ/րոպե, իր հենակալման սարքվածքներով /արժեքը/	լրակազմ	70.63
		Շրջանառու պոմպ, 30/6 H=6մ 60լ/րոպե, իր հենակալման սարքվածքներով /արժեքը/	լրակազմ	79.03
		Շրջանառու պոմպ, 30/7 H=6մ 120լ/րոպե, իր հենակալման սարքվածքներով /արժեքը/	լրակազմ	150.00
		Պոլիպրոպիլենային ալյումինե շերտով Φ50մմ, PN10, խողովակի մոնտաժում և մեկուսացում իր պոլիպրոպիլենային ձևավոր մասերով	գծմ	10.33
		Պոլիպրոպիլենային ալյումինե շերտով Φ40մմ, PN10, խողովակի մոնտաժում և մեկուսացում իր պոլիպրոպիլենային ձևավոր մասերով	գծմ	8.05

1	**Արևային էներգիայի ստացման համակարգերի տեղադրում CPV՝ 09331400/**	Պոլիպրոպիլենային ալյումինե շերտով Φ32մմ, PN10, խողովակի մոնտաժում և մեկուսացում իր պոլիպրոպիլենային ձևավոր մասերով	գծմ	5.85
		Պոլիպրոպիլենային ալյումինե շերտով Φ25մմ, PN10, խողովակի մոնտաժում և մեկուսացում իր պոլիպրոպիլենային ձևավոր մասերով	գծմ	4.79
		Պոլիպրոպիլենային ալյումինե շերտով Φ20մմ, PN10, խողովակի մոնտաժում և մեկուսացում իր պոլիպրոպիլենային ձևավոր մասերով	գծմ	4.36
		Φ15-50մմ փականների տեղադրում /առանց արժեքի/	հատ	3.45
		Փական Φ15մմ /արժեքը/	հատ	2.43
		Փական Φ20մմ /արժեքը/	հատ	2.82
		Փական Φ25մմ /արժեքը/	հատ	3.55
		Փական Φ32մմ /արժեքը/	հատ	6.82
		Փական Φ40մմ /արժեքը/	հատ	9.98
		Փական Φ50մմ /արժեքը/	հատ	13.63
		Պոլիպրոպիլենային փական Φ20մմ /արժեքը/	հատ	1.86
		Պոլիպրոպիլենային փական Φ25մմ /արժեքը/	հատ	1.99
		Պոլիպրոպիլենային փական Φ32մմ /արժեքը/	հատ	3.12
		Պոլիպրոպիլենային փական Φ40մմ /արժեքը/	հատ	6.42
		Պոլիպրոպիլենային փական Φ50մմ /արժեքը/	հատ	8.64
		Պոլիպրոպիլենից-լատուն 20-32մմ ձևավոր մասեր/արժեքը/	հատ	0.79
		Խողովակների միացում գոյություն ունեցող ջեռուցման և ջրամատակարարման ներքին ցանցի խողովակաշարերին, 50մմ տրամագծով	տեղ	13.30
		Խողովակների միացում գոյություն ունեցող ջեռուցման և ջրամատակարարման ներքին ցանցի խողովակաշարերին, 15-40մմ տրամագծով	տեղ	10.30
		Մալուխի մոնտաժում ՊՎՀ 3*2,5մմ² կտր./բաց տեղադրմամբ/	100մ	98.81
		Խողովակի հակասառեցման լարի մոնտաժում	մ	1.00
		Միաֆազ ավտոմատ էլ. անջատիչ 25Ա ըստ խզման հոսանքի	հատ	3.78
		Միաֆազ ավտոմատ էլ. անջատիչ 16Ա ըստ խզման հոսանքի	հատ	3.78
		Սարքավորումների տեղափոխման ծախսեր /մեկ համակարգի մոնտաժման համար/	լրակազմ	79.99
		Արևային ֆոտովոլտային համակարգի տեղադրում		0
		Արևային ֆոտովոլտային մեկ վահանակի մոնտաժում իր տեղակայման կառուցատարրերով /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	9.055
		Արևային ֆոտովոլտային մեկ վահանակի փոխարինում /առանց սարքավորման արժեքի/	հատ	9.055
		Արևային ֆոտովոլտային համակարգ, իր հենակալման սարքվածքներով (պոլիկրիստալային, 60 բջիջ, 270վտ, հզորության հավելյալ պաշար 7-8վտ, ՕԳԳ 16,5%) /արժեքը/	լրակազմ	118.300
		Փոխակերպիչի մոնտաժում /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	12.073
		Փոխակերպիչ (ցանցից անկախ, 24/~230Վ) /արժեքը/	լրակազմ	228.000
		Լիցքավորիչի մոնտաժում /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	12.073
		Լիցքավորիչ (ցանցից անկախ, 24Վ, 20Ա) /արժեքը/	լրակազմ	64.000
		Մարտկոցի մոնտաժում /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	7.093
		Մարտկոց (հեղուկային, խորը ցիկլով սպասարկում պահանջով 24Վ, 40 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	63.500
		Էլեկտրական հաղորդալար պղնձե 1*4մմ² կտր. մոնտաժում /առանց էլ. հաղորդալարի արժեքի/	գծմ	0.151

1	**Արևային էներգիայի ստացման համակարգերի տեղադրում CPV՝ 09331400/**	Էլեկտրական հաղորդալար պղնձե 1*4մմ² կտր. /արժեքը/	գծմ	0.494
		Մալուխի՝ պղնձե 3*4մմ² կտր. մոնտաժում /առանց մալուխի արժեքի/	գծմ	0.249
		Մալուխ պղնձե 3*4մմ² կտր. /արժեքը/	գծմ	0.865
		Միակցիչ MC4 4մմ /արժեքը/	լրակազմ	1.900
		Սարքավորումների տեղափոխման ծախսեր /մեկ համակարգի մոնտաժման համար/	լրակազմ	120.732
	Ընդամենը՝			**2698.29**

Նանոթություն.

1. Աշխատանքներն իրականացվելու են հանրապետության ողջ տարածքում (ՊՆ զորամասերում) նախատեսված առավելագույն գնի սահմաններում, համաձայն հաստատված թերությունների ակտերի և պատասխանատու ստորաբաժանման հետ համաձայնեցված գնման ժամանակացույց-օրացուցային գրաֆիկի:

2. Շինանյութերն ու սարքավորումները ձեռք են բերվում կապալառու կազմակերպության կողմից՝ բացառապես շինարարական աշխատանքներում օգտագործելու համար՝ ըստ շինարարական նորմերի չափորոշիչների:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ ընդհանուր տնտեսության պետի ՊԺԿ

տնօրեն Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՐՓԻՍՈԼԱՐ» ՍՊԸ
(մինչև անվանափոխությունը՝
«Սիէյչեյ Վերիսել Սերվիս» ՍՊԸ)

տնօրեն Ա. ՉՈԲԱՆՅԱՆ

Հավելված № 2
ԲԸԱՇՁԲ-10/7-1 պայմանագրի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ (ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ)
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2017թ.

Հ/հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների և անվանումներ	Ծախսը (առավելագույն գինը) (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	Արևային էներգիայի ստացման համակարգերի տեղադրում	25,000,000	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	20/12/2017թ.

Հավելված № 3

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2017Թ*

ՀՀ դրամ

Հ/հ	CPV կոդ	Աշխատանքի անվանումը	Պայմանագրային գին (առավելագույն) (դրամ)	Նախատեսվում է ֆինանսավորել Ըստ ամիսների*							
				VI	VII	VIII	IX	X	XI	XII	Ընդամենը
1	09331400	Արևային էներգիայի ստացման համակարգերի տեղադրում	25,000,000	10,000,000	24,000,000	24,000,000	24,000,000	25,000,000	25,000,000	25,000,000	25,000,000

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏՍ գնումների կենտրոնի պետի ՊԺԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՐՓԻՍՈԼԱՐ» ՍՊԸ
(մինչև անվանափոխությունը՝
«Սիէյչէս Կոմերսալ Սերվիս» ՍՊԸ)

տնօրեն

Ա. ՉՈԲԱՆՅԱՆ

Հավելված № 4
<< >> 20 թ.
կնքված աշխատանքների կատարման
№ <<Պայմանագրի ծածկագիրը>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

	Կատարված աշխատանքների							
			Քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը			
	Անվանումը	Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 4.1
<< >> << >> 20 թ. կնքված
№ _____ ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ------ -ին կնքված N ————
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ——— -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն